



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 մայիսի 2014 թվականի N Մ- 451 -Ա
քաղ. Երևան

«ՎՈՐԼՂ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՑՇՆԼ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԵՆԻՄԻ ԵՎ ՃԱՄԲԱՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ, ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱՅԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ, ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՔՍԱՆԵՐԵՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ԴՊՐՈՑՆԵՐԻՆ, ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ՊՐՈԵԿՏՈՐՆԵՐԻ
ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 3/3.8-2/6625-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 02/2868-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի ապրիլի 26-ի N 04/07-1/4401-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի 30-ի N ՎՄ/3-4/5182-14, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N01/15/1578-14, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի ապրիլի 29-ի N01/1976-14 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2014 թվականի ապրիլի 29-ի N01/13.3/1510-14 եզրակացությունները, **որոշում է.**

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 4,830,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանների, Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանի, Տավուշի մարզի քսաներեք համայնքների դպրոցներին, կիրակնօրյա դպրոցներին պրոեկտորների նվիրաբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կոմպաս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01545204) 2014 թվականի փետրվարի 28-ին կնքված՝ N WVA/ADPs-Proj/IT-14/003/FY14 պայմանագրում (2014 թվականի ապրիլի 14-ի N WVA/ADPs-Proj/IT-14/003/FY14-01/FY-14 համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը,

որով նախատեսվում է պրոեկտորների մատակարարում՝ 4,830,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի, Շիրակի ու Տավուշի մարզպետարաններին:

ՆԱԽԱԳԱՀ



ՍՏԵՐ-ՄԻՍՈՆՅԱՆ